19 մարտի 2010 թվականի N 186 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1073-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» N 1073-Ն որոշման հավելվածում՝

1) հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 34.1-ին, 34.2-րդ և 34.3-րդ կետերով.

§

34.1.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	տեղական ինքնակառավարման մարմիններից ՀՀ համայնքների բյուջեներին ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից տրվելիք ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառվելիք հողի հարկի և գույքահարկի գծով՝ ըստ առանձին համայնքների 2009 թվականի ելակետային տվյալների ՀՀ մարզպետարաններում ստացման, ինչպես նաև այդ տվյալները ՀՀ մարզպետարանների կողմից ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ներկայացնելու համար ժամկետների սահմանում	ՀՀ մարզպետարաններ	մինչև 2010 թ. մարտի 6-ը
34.2.	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն	ՀՀ համայնքների բյուջեներին ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից տրվելիք ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառվելիք 2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ ըստ առանձին համայնքների մշտական բնակչության թվի գծով ելակետային տվյալների տրամադրում	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2010 թ. հուլիսի 1-ը
34.3.	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	ՀՀ համայնքների բյուջեներին ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից տրվելիք ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառվելիք՝ ըստ առանձին համայնքների ելակետային տվյալների տրամադրում՝ ՀՀ ֆինանսների նախարարության մեթոդական ցուցումների համաձայն	ՀՀ ֆինանսների նախարարություն	մինչև 2010 թ. հուլիսի 1-ը

¦.

2) 35-րդ, 41-րդ, 46-րդ, 51-րդ և 58-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

§

35.	ՀՀ տարածքային կառավարման	ՀՀ համայնքների բյուջեներին ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից տրվելիք ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշ-	ՀՀ ֆինանսների նախարարու	մինչև 2010 թ. հուլիսի

	նախարարություն	վարկներում կիրառվելիք՝ ըստ առանձին համայնքների էլեկտրային տվյալների տրամադրում՝ ՀՀ ֆինանսների նախարարության մեթոդական ցուցումների համաձայն	թյուն	24-ը
41.	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից ՀՀ համայնքների բյուջեներին տրվելիք ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվարկներում օգտագործման համար ստացված՝ պետական մարմինների կողմից հաշվառվող էլեկտրային տվյալների մասին տեղական ինքնակառավարման մարմիններ ծանուցումներ ուղարկելը	ՀՀ մարզպետարանների միջոցով՝ տեղական ինքնակառավարման մարմիններ	նշված տվյալներն ամբողջական ձևով ստանալու օրվանից 10-օրյա ժամկետում
46.	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ համայնքների բյուջեներին ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից տրվելիք ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառվելիք՝ համայնքների 2009 թվականի բյուջեների եկամուտների կորուստների գումարների հաշվարկում՝ ըստ առանձին համայնքների	x	մինչև 2010 թ. սեպտեմբերի 25-ը
51.	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ համայնքների բյուջեներին ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից տրվելիք ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկում՝ ըստ առանձին համայնքների (հաշվարկների հիմքում դնելով «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ 1998 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-262 օրենքը)	x	մինչև 2010 թ. սեպտեմբերի 28-ը
58.	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ համայնքների բյուջեներին ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից տրվելիք հատկացումների չափերի մասին ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններին տեղեկությունների (ներառյալ՝ ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկման մեթոդաբանության) ուղարկում	ՀՀ մարզպետարանների միջոցով՝ տեղական ինքնակառավարման մարմիններ	«Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի պաշտոնական հրապարակումից հետո մեկամսյա ժամկետում

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

10_0186

2010 թ. մարտի
Երևան